

## ՄԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Ռուսաստանում պրոֆեսոր Հենրի Հովսեփի Բակունցի հրատարակած «Ուղեղային կաթվածի էնդոգեն գործոնները» մենագրությունը ունի մեծ նշանակություն Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ այլ երկրների նյարդաբանների համար: Հ. Հ. Բակունցը հայտնի գիտնական, կլինիցիստ է, որն իր ակտիվ, բազմակողմանի գործունեությամբ վաստակել է Ռուսաստանի և արտասահմանի նյարդաբանական և այլ գիտա-բժշկական միությունների հարգանքը: Մենագրության հիմքում ընկաց են Հ. Հ. Բակունցի բազում տարիների հետազոտությունների արդյունքները, որտեղ հեղինակի կողմից ներկայացված է ուղեղանոթային հիվանդությունների պաթոֆիզիոլոգիայի ուսումնասիրության և բուժման մշակման սկզբունքների նոր մոտեցումը, իմունային, ճարպային միկրոցիրկուլյատոր հոմեոստազի խանգարումների և այս ցուցանիշների վերլուծության համալիր գնահատմամբ: Հ. Հ. Բակունցը առաջին նյարդաբաններից մեկն է, ով սկսեց մշակել ուղեղի անոթային հիվանդությունների նյարդաիմունային ասպարեզները, օգտագործել ուղեղային արյան շրջանառության խանգարումների բուժման էքստրակորպորալ միջոցները, այդ թվում նաև նեյրոռեանիմացիայի պայմաններում: Այն մեծ գիտական և կլինիկական փորձը, որ ձեռք է բերել պրոֆեսոր Հ. Հ. Բակունցը աշխատելով ակադեմիկներ Յու. Մ. Լոպուխինի, Ռ. Վ. Պետրովի, ՌԲԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ա. Յա. Կուլբերգի առաջատար դպրոցներում, առավել լայն և ստեղծագործ կերպով օգտագործվել է Հայաստանում:

Ներկայացված մենագրության մեջ հեղինակը ընդհանրեցնում է ժամանակակից բժշկության առավել արդի հարցերից մեկի՝ ինսուլտի խնդրի, իր ավելի քան 30 տարիների աշխատանքային փորձը: Մենագրությունը նվիրված է ինսուլտի տարբեր ձևերի ձեավորման և զարգացման մեջ օրգանիզմի էնդոգեն դիսֆունկցիաների բազմագործոն դերի և կարգավորման մեթոդների հայտնաբերմանը: Առանձնահատուկ հետաքրքրություն է առաջացնում նյարդաբանական գրականության մեջ առաջին անգամ նկարագրված տվյալները նյարդաիմունաներգատական ցանցի (ՆԻՆՑ) դերի և նշանակության մասին ուղեղային արյան շրջանառության սուր խանգարումների ժամանակ առաջացող բարդ փոդկապակցված և միմյանցով պայմանավորված

պրոցեսների զարգացման դինամիկայում: Հեղինակը հիմնավոր կերպով կառուցում է նյութափոխանակության խանգարումների հետ զուգակցված ՆԻՆՑ փողկապակցված դիսֆունկցիաների ինտեգրատիվ օղակ, սկսած «ախտաբանության կետային կուտակման» պրոցեսներից և նրա հետագա զարգացումից, ինչը հնարավորություն է տալիս ոչ միայն ախտորոշել հիմնական ախտաբանական և ախտաֆիզիոլոգիական պրոցեսները, որոնք առաջանում են ինսուլտների ժամանակ, այլև անցկացնել ադեկվատ ֆարմակոթերապևտիկ կարգավորում: Աշխատանքում ՆԻՆՑ-ը ներկայանում է որպես միասնական, ամբողջական ընդհանուր կարգավորիչ մի համակարգ, որը կապում է հոմեոստազի բոլոր ակտիվ բաղադրիչները և ստեղծում է օրգանիզմի գործունեության ամբողջական պատկեր զարգացող ինսուլտի պայմաններում: Նշված առումով անկասկած տեսական և կլինիկական հետաքրքրություն է առաջացնում հիպոթեզը R - սպիտակուցների (բջջային ընկալիչների հատվածների) և ինսուլտների ժամանակ հոմեոստազի գնահատման մեջ դրանց դերի մասին և ստացված կիրառական ելքերը: Առանձնացնելով ինսուլտների ժամանակ հոմեոստազի խանգարումների ձևավորման մեջ ընդհանուր օղակը, որը կապված է բջջային ընկալունակության խանգարման կամ շեղման հետ, հեղինակը ցույց է տվել, որ հենց նրա շուրջ են զարգանում բարդ ախտաֆիզիոլոգիական պրոցեսները, որոնք տանում են օրգանիզմում կենսաբանական հավասարակշռության խանգարման և, ի վերջո, հանգեցնում են ուղեղային արյան շրջանառության խանգարման տարբեր ձևերի առաջացմանը:

Սրա հետ մեկտեղ, մեծ հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի կողմից առաջարկված առաջին անգամ կլինիկական պայամներում մի շարք էնդոգեն չափորոշիչների բազմագործոն վերլուծությունը, նրանց տեղեկատվականության աստիճանի պարզաբանումը, նրանց միջև փողկապակցվածության հաստատումը, ախտաբանական պրոցեսի համար առավել նշանակալի հատկանիշների առանձնացումը: Այս ամենը տրամաբանորեն ավարտուն է դարձնում այս բովանդակալից աշխատությունը:

Ինչպես բաձարձակ արդարացի նշում է ներածության մեջ ՌՄԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Վ. Ի. Սկվորցովան, ինսուլտի խնդրի հետազոտման նյարդաբանների

համաշխարհային միության առաջատար մասնագետներից մեկը, «հեղինակի կլինիկոլաբորատոր հետազոտություններին զուգահեռ հատկապես ուզում եմ նշել նրա կողմից ղեկավարվող անգլիոներոլոգիայի կենտրոնի իրական կլինիկական ձեռքբերումները և Հայաստանում հակահիստուլտային ծառայության խոստումնալից զարգացումը»: «Stroke» բժշկական կենտրոնի ստեղծումը և հեղինակի կողմից մշակված և մենագրության մեջ նկարագրված ինսուլտով հիվանդներին կանխարգելիչ, բուժական և վերականգնողական օգնության ծրագրի ներդրումը Հայաստանին, այս նշանակալից բժշկական և սոցիալական ախտաբանության հետ պայքարում, առաջատար դիրքեր դուրս գալու հնարավորություն կտա:

Պրոֆեսոր Հ. Հ. Բակունցի մենագրությունը հարկավոր է գնահատել, որպես հիմնարար աշխատություն, որը էական ներդրում է անում այնպիսի արդիական խնդրի լուծման մեջ, ինչպիսին ուղեղային կաթվածն է, և այն կարող է լիիրավ մտնել այն գիտական աշխատությունների ցանկի մեջ, որոնք կանխորոշում են ինսուլտի մասին ժամանակակից գիտության խոստումնալի զարգացումը:

ՌԴ առողջապահության և սոցիալական զարգացման  
նախարարության գլխավոր նյարդաբան  
Նյարդաբանների Համառուսական միության կառավարման նախագահ  
Ինսուլտի հետ պայքարի Ազգային ասոցիացիայի նախագահ  
Ռուսաստանի Ազգային հետազոտական  
Ն. Ի. Պիրոգովի անվան բժշկական համալսարանի  
Նյարդաբանության և նյարդավիրաբուժության ամբիոնի վարիչ  
ՌԲԳԱ ակադեմիկոս, պրոֆեսոր **Ե. Ի. Գուսև**

Հայաստանի բժշկական գիտություն ՀՀ ԳԱՆ<sup>o</sup> 3, 2012, էջ. 126-127